անգամներով Պոլիս գնացած չլինէր եւ այնտեղ տարիներով մնացած չլինէր: Այդ ծուլութիւնը, այդ անհոգութիւնը, այդ շռայլութիւնը դրանք բերել են Պոլսից:

Ես մտաբերեցի Ասլանի խօսքերը, որ մի օր ասում էր ինձ. «Պոլիսը փչացրել է դրանց, ա՜խ, որքա՜ն ժամանակ, որքա՜ն աշխատութիւն է հարկաւոր մի այդպիսի հասարակութիւն ուղղելու համար»...

Երբ արհեստաւորը վերջացրեց իր հետաքրքիր նկարագիրը վանեցոց պանդխտութեան մասին տէր հայրը ասաց.

— Ցաւալին այն է, որ այդ ախտը քաղաքից հետզհետէ աւելի եւ աւելի տարածւում է եւ աշխատասէր գիւղացիների մէջ: Նրանք էլ վարակոել են: Նրանք էլ թողնում են իրանց վարը, ցանքը, գնում են Պոլիս: Եւ այդպէս մեր ամենալաւ ուժերը մաշւում են, ոչնչանում են պանդխտութեան մէջ:

Արեւը մտնելու մօտ էր: Ես շտապում էի տուն վերադառնալ, գիտէի, որ Ասլանը սպասելիս կը լինէր ինձ: Ես վերկացայ, տէր հայրը նոյնպէս եկաւ ինձ հետ: Բայց արհեստաւորը, մնաք-բարեաւ ասելով, բաժանուեցաւ մեզանից: Ճանապարհին հարցրի տէր հօրից.

— Ո՞վ է այդ մարդը:

— Հասարակ դարբին է, — պատասխանեց տէր հայրը:

— Բայց ի՞նչ լաւ խօսում է:

— Նա բաւական զարգացած մարդ է:

— Ես սաստիկ համակրեցի նրան:

Տէր հայրը իր շուրջը նայելով, որպէսզի ոչ ոք չլսէ, հազիւ լսելի ձայնով ասաց.

— Նա «մերոնցից» է...

— Ասլանը ճանաչո՞ւմ է նրան:

— Ճանաչում է:

— Իսկ նա՞ Ասլանին:

— Չէ ճանաչում:

Արեւը մտաւ: Երեկոյեան զովը աւելի ախորժելի դարձաւ: Ձբօսնող բազմութիւնը հետզհետէ ստոարանում էր, եւ ամէն կողմից լսելի էին լինում երգի, ուրախութեան ձայներ: Ես դարձեալ մտաբերեցի Ասլանի խօսքերը, թէ «այդ ժողովուրդը ծիծաղում է արտասուքի միջից»...